



17. ՍԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ ԿԱՄ ՍԱՌՍԱՆԱՄ

Ժամանակով ըլում ա, չի ըլում՝ մի թաքավոր մի քաղաքում։
էդ թաքավորը միտք ա անում, որ լէս քաղաքի միջումը ես մի
վարձք բան չի արի, էսքան հարստութիւնը ունեմ, ես պտիմ մի
վարձք անի, որ հարուստ ու քյասիբ լիանան»։

էրկու հազար փութ մեղր առավ, էրկու հազար էլ՝ կարագ,
խառնեց իրուր։ էն քաղաքի վերի կուանը մի բանձր սար կար, էն
եղն ու մեղրը տարավ էն սարի գլուխը, սաղ քաղաքին իմացրուց.—
էկե՛ք, որ ես պտիմ վեր թողա ըստիան, ինչքան կուզեք հվաքե-
ցեք, տարեք։

Չիմն էլ ամենքը մի աման, մի բան վի կալան ու գնացին։
Դա էդ եղն ու մեղրը վեր էթող սարի գլխիցը, խալխը չիմ էլ հա-
վաքեցին, կերան ու լիացան։ Լիացան, սկսեցին ամենքը իրանց
տները գնալը։ Մի ախշիկ, ամանը ձեռին, լիզելով էթում էր. էդ
քաղաքում մի պառավ կնիկ կար, գնաց էդ ախշիկը ըտրա տունը։
Պառավը հարցրուց էդ ախշկանը, թե.— էդ ի՞նչ էս լզստում։

Ասավ.— Գիտես ո՞չ, որ թաքավորը էս զայդի բան ա արե՞լ։

— Ախշի՛, օղորդ ես ասում։

— Բա՛, օղորդ եմ ասում։

— Ա՛յ որդի, էլ կա՞, թե չիմ տարան։

— Որ հավաքող ըլի, ըլի որ էլի ըլի։

էդ պառավը մի աման վի կալավ, դնաց էդ սարի տակը, տե-
հավ շիմ տարել են, այնօյին, ըսդի-ընդի կա, սկսեց թոփ անիլը:
Խալիսը շիմ գնացել ին, թաքավորի տղեն դեռ ընդի էր:

Թաքավորի տղեն գնաց պըռավի ամանին քացի էրետ, դեն
պցեց, թե.— Էսդտա վախտ որդի՞ ես էլեղ, որ նոր էկել էս ֆող
էս հըվաքում:

Պառավը դրան անըծեց.— Աստծանե կխնդրեմ,— ասավ,—
որ մի հենց քամի անի, որ քեզ տանի Սալլի խանըմի բերդը գցի:

Ասելու պես մի քամի վի կացավ, էդ տղին վի կալավ, տա-
քավ մի հեռու աշխարհքում մի Ծմակի միջում, մի բերդի միշում
վեր էբեր:

Տղեն վի կացավ, մտիկ արավ, տեհավ, որ էս բերդին ո՛չ
դուռն ունի, ո՛չ դուռ ըլելու տեղ:

— Տեր աստված,— ասավ,— էս ի՞նչ փորձութիւն էր՝ իմ
պուխը էկավ:

Էդ բերդի միջումը մի հայաթ կար, էդ տղեն միտք անելով
վի կացավ էդ հայաթի շորսի կուռը ման էկավ, տեհավ՝ ո՛չ դուռն
տունի, ո՛չ փանճարա: Վերև մտիկ արավ, տեհավ, որ էդ հայաթի
պլխին մի զարմանելի ախշիկ կա: Ախշիկն էլ տղին տեհավ: Ախշկա
աչքին էդ տղեն հենց դուր էկավ, սիրտը թոթոաց: Վերնուց ձեն
սածավ, թե.— Անմեղ ման մի գալ, տան դուռը շես կարա գտնի-
լտի կա՛ց, ես էս ա դվեր եմ գալի:

Ախշիկը գվեր էկավ տղի կուռտը, ասավ.— Դուն ո՞վ էս, որ
տուշն իրան թեռվը, օձն իրան պորտովը մեր ահիցը կարալ շի, որ
դեսը անց կենա: Դու քանի՞ պլխանի էս, որ էկել էս ըստի:

— Աստծանե հրաման էր, ես էկա ընկա ըստի:

— Ա՛յ տղա, ինձ կուզե՞ս, որ ես քեզ ըստիան ազատեմ:

— Խանո՞ւմ, աշխարքիս էրեսին քեղանից լավ ախշիկ պտիմ
ուղի՞:

Ախշիկը տղին տարավ տուն, իրուր հետ հաց կերան, քեփ
արին:

Բիզունը մթնեց, մերն էկավ բերդի դըրսի կոնիցը ձեն ածավ.—
Սալլի խանո՞ւմ, արի մազերդ կախ արա, որ գամ:

— Կացի՛,— ասավ ախշիկը,— գալիս եմ:

Տղին վի կալավ մի առանձին տեղ պըհեց, գնաց մազերը կախ
արավ, մազերիցը մերը բռնեց, ու դուռ էկավ բերդը:

Մերն էկավ տուն, ախշկանն ասավ.— Ախշի՛, էս ի՞նչ մարդի
ֆոտ ա գալիս ըստիան:

Ախշիկն ասավ.— Նանի՛, մենք խո թազա չենք էկե՛ն էս տուն, քանի տարի ա մենք էս տանն ենք, ըստի իսան տեհա՞ծ էս: Քու ահիցը, իմ ախպորտանց ահիցը իսան կարա ձեր տան գլխովը անց կենա՞: Ո՛վ դիտի, որդի էս իսան կերե, հըմի ատամնուցդ ֆոտ ա դալի, հենց գիտես, թե ըստի մարդ կըլի:

— Հա՛, ախշի դրուստ, էրեկի կերել նմ:

Մի քիչ վախտից եղը էն օխտն ախպերն էլ էկան, նհանք էլ մոր պես ասին, թե.— Նանի ջա՛ն, էս փ՞նչ մարդի ֆոտ էր, որ ըստիան էկավ:

— Ա՛յ որդի,— ասավ նանը,— էրեկ որ էն մարդը կերանք՝ ընդուր ֆոտը չըլի:

է՛, տղերքն էլ խափվեցին, ռավոտը վի կացան ու եդ գնացին՝ ախպերտինքն էլ, մերն էլ:

Ախշիկը գնաց տղին հանեց, էկան դրանք էդ օրն էլ իրուր հետ կերան ու քեփ արին ըտի: էքսի օրը ախշիկն ասավ տղին.— Դուն տենո՞ւմ ես, որ իմ ախպերտինքն էլ են ուշապ, մերս էլ ա ուշապ, մի օր վրավուրդ կանեն, քեզ էլ կուտեն, ինձ էլ կուտեն: Լավն էն ա, որ վի կենանք ու ըստիանց գլուխներս առնենք կորչենք:

Ասավ տղեն.— Ո՞նց դուրս կըլենք էս բերդի միջից:

Ախշիկն ասավ, թե.— Ոնց որ իմ մազերը կախ եմ անում, իմ մերը ոնց բռնում ա ու իջնում, դուն էլ ընե բանի ու իջի, ես ոնց որ ըլի՛ դուս կգամ:

Ախշիկը մազերը կախ արավ, տղեն բըռնեց ու իջավ. ախշիկը թռավ, ինքը դուս էլավ:

Ախշիկը տղին ասավ.— Ա՛յ տղա, աստծով բերդիցը լավ պըր-ծանք, դե արի փախչենք, որ իմ մորիցն ու ախպորտանցե տենունք ո՞նց պտինք պրծնուլ:

Սկսեցին դրանք փախչիլը. փախան, էն օրը գնացին, էն քշերն էլ գնացին: Ախշիկը ռավոտը ասավ.— Ա՛յ տղա, եդ մտիկ արա, տես խո օքմին չի գալի:

Տղեն եդ մտիկ արավ.— Ախշի՛, — ասավ,— մի կտոր ամպ ա գալի:

— է՛դ,— ասավ,— իմ մենձ ախպերն ա: Ի՞նչ անենք, որ պրծնունք:

Տղեն ասավ.— Դու գիտես,— ասավ,— ոնց որ գիտես՝ հնե արա՛: Ծս որ մի բան էլ ա գիտեմ ոչ:

Ախշիկն ասավ.— Դե լավ, ուշապը օձիցը շատ կվախի, շունքի աւշապը որ կծում ա՛ յաղու շունի, օձը յաղու ունի, ընդուր մհար

ուշապը օձիցը շատ կվախի: Ես կդառնամ մի աղբիւր, քեզ կշինեմ օձ, Դուն կմտնես աղբիւրի ակը. կգա իմ ախպերը, կտենու, որ մենք ենք, կկըռանա, որ էն ախպրիցը ջուր խմի, դուն ընդհան դըբս: աչքը նի կգաս, նա շատ կվախի, կարալ չի, որ ջուր խմի:

Ախշիկը դառավ մի աղբիւր, տղին շինեց օձ. ուշապն էկավ, քանի ուզեց ջուր խմի, ախպրի ակնիցը էդ օձը վրա թռավ, ըն դրա աչքը կծի, դա վախեց, եդ քաշվեց: Շատ շալիշ էկավ ջլիզ, օձը մտտ չէթող, որ դա ըտիան ջուր խմի: Ուշապի ջիգրը էկավ, թքեց ու եդ գնաց:

Եդ ախշիկ էդտու, դրան էլ շինեց էն տղեն, ձեռ-ձեռի տվին, ըսկսեցին փախչիլը: Օր ու քշեր փախան:

Ռավոտը ախշիկն առավ.— Եդ մտիկ արա, տես խո օքմին չի գալի՞:

Տղեն եդ մտիկ արավ, տեհավ, որ թող ու դուման ա գալի եղնուց:

— Պա՛հ, պա՛հ,— ասավ,— ախշի՛, էս ի՞նչ բան ա, ի՞նչ գալիս ա:

Ախշիկը հարցրուց թե.— Ի՞նչ ա գալի:

Թե.— Թող ու դուման ա գալի:

— Ա՛յ էդ իմ միջնեկ ախպերն ա. վալ թե դա մեղ փշացնի:

Տղեն ասավ.— Բա ի՞նչ անենք, որ դրանե պրծնունք մե՛նք:

Ախշիկն ասավ.— Ա՛յ տղա, վախիլ մի, թե իմ ասածը կանես՝ դրանից էլ կպրծնունք:

Տղեն առավ, թե.— Իլլաճս ի՞նչ, որ անենք ոչ:

Ախշիկն ասավ.— Ես մի բաղ կդառնամ, շորսի կուռը հենց հասար քաշած, որ իմ ախպերը կարենա ոչ նի մտնի: Միչումը շատ խիար, ձմերուկ կըլի: Քեզ էլ կշինեմ միչումը բաղմանչի, ես էլ կդառնամ հրենիկ էն եմիշը: Կգա իմ ախպերը, շալիշ կգա, որ էդ բաղիցը մի բան առնու: Թե՛ խափվեցիր ու տվիր, էնե մեզ կփշացնի:

էդ ախշիկը դառավ մի բաղ, շորսի կուռը հասար քաշած, դրան շինեց մի բաղմանչի, էդիր միչումը, ինքն էլ դառավ մի եմիշ:

Ախպերն էկավ հասավ: էկավ տեհավ, որ քիրը բաղ ա դառել, տղին բաղմանչի շինել, ինքը մի եմիշ դառե: Ձեն էրեստ, թե.— Բաղմանչի՛, դու ա արի հլա՛:

Դու ա էկավ տղեն:

— Ա՛յ բաղմանչի,— ասավ,— աստժու խաթեր,— ասավ,— ծարավ մեռնում եմ, ըլիլ չի որ ըստիան յա մի խիար տաս, յա մի ձմերուկ:

Տղեն ասավ.— Ձէ, կարալ չե՛մ, իմ բանը չի:

— Դե որ տալիս չես, էն պոռճուր եմիշը տուր, ինչ որ իրան գինն ա՛ էրկու իրան գինն ա՛ն:

Ասավ.— Կարալ չեմ, որ տամ:

Ասավ.— Խի՞ չես տա:

Ասավ.— Սա թաքավորական բաղ ա, չվել թաքավորը իրավունք չտա, որ մեռնես էլ՝ մի զադ չեմ տա:

էդ ուշապի ջիգը շատ էկավ, թքեց ու եդ դառավ:

էն ախշիկը եդ դառավ էլ էն ախշիկը, էն բաղմանչուն շինեց էլ էն տղեն, ետ ձեռ-ձեռի տվին ու փախան: Օր ու քշեր փախան:

Ուսովտը էլեթ տղին ասավ.— Հըլա եդ մտիկ, տե՛ս խո օքմին չի գալի՞:

Տղեն եդ մտիկ արավ, ասավ.— Մի դուշ ա գալի:

— Պա՛, — ասավ, — ա՛յ տղա, ինչ իլլաճ ունես՝ տե՛ս, որ էդ իմ մերն ա: Դրանից դժար պտինք պրծնուլ:

Ասավ.— Ախշի՛, ինչ իլլաճ ունես, դու տես, դու՛ն տենում ես, որ ես մի բան էլ ա գիտեմ ոչ:

— Դե որ գիտես ոչ՝ ինչ որ քեզ ասեմ՝ պետք ա անես:

Ասավ.— Գլխի՛ս վրա:

Ասավ.— Ես կդառնամ ծով, մի պրախոդ միջին կսարքեմ, քեզ կդընեմ պրախոդչի, ես էլ տապ կանեմ էն թոխի ծառի տակին: Իմ մերը կգա շալիշ կգա, որ պրախոդը մոտիկ քշես, որ քալի պրախոդին վեր ըլի: Դուն մոտ չթողուս, քշես ոչ պրախոդը մոտիկ գա: Նա կուզենա, որ ծովիցը ջուր խմի, ես լափու կըտամ՝ շատ հեռու տեղ կգցեմ: Եդ կըսկսի քեզ դանչանք անելը: Կարալ չեմ, — ասա, — քեզ վեր ունիլ, էս թաքավորական պրախոդ ա, իրավունք կա ոչ:

էտ ախշիկը ծոցից մի հալլի հանեց, վրա արավ, գցեց էդ դգի մեշը՝ դառավ մի մենձ ծով, միջին սարքեց մի պրախոդ, էդ տղին էդիր պրախոդի միջումը: էն ծովի դրաղին մի քոխի ծառ կար, գնաց տակին տապ արավ: Մերն էկավ հասավ պրախոդչուն առավ.— էդ պրախոդը դեսը քշի, բըզարել եմ, ես էլ նստեմ, անց կենամ, ինչ որ քու հախն ա, մինն էրկուսով ա՛ն:

— Ձէ՛, — ասավ, — դեդի ջա՛ն, ըլիլ չի, սա թաքավորական պրախոդ ա, իրավունք չկա:

Ուզեց, որ ծովիցը ջուր խմի՝ էդ ախշիկը հընենց լափու էրետ, էդ ջուրը դրան շատ հեռու քշեց, կարաց ոչ որ ջուր խմի, էդ պրախոդչուն սկսեց դանչանք անիլ, թե.— Ինձ էլ պրախոդն առ, աստծու սիրո խաթեր:

— Չէ՛,— ասավ,— գեղի ջա՛ն, կարալ շեմ, թքավորը որ ի՛մա-
նա, իմ գլուխը քու գլխիցը լավն ա, վախում եմ, որ գլուխս կտրի:
Ջիգրն էկավ, թքեց ու ըտիան եղ դառավ:

էն ախշիկը եղ դառավ էլ էն ախշիկը, տղին էլ շինեց էն տղեն:
Ձեռը բռնեց էդ տղի թե.— Փա՛ռք քեղ, սուտո՛ժ, որ պրծանք: Ա՛յ
տղա, էլ վախիլ մի, հըմի դժտրը որ կուզես, արխեին գնանք:

Վիկացան ձեռ-ձեռի տվին ու ըղու էլան: Գնացին մի չժվորի
ոաստ էկան: Տեհան շիմ սև հագած:

Տղեն ասավ.— Ախշի՛, հլա ըստի նստի, տենանք ի՞նչ
բան ա սա:

Տղեն գնաց էդ չժվորի կուշտը, ասավ.— էս ի՞նչ բան ա, որ
ճիպոտդ էլ ա սև հագցրած, դուն էլ ես սև հագե, շութդ էլ ես սև
հագցրե, եզնիքդ էլ ես սև հագցրե, հոտաղդ էլ. դա ի՞նչ բան ա:

Ասավ.— Մեր թաքավորին մի տղա ուներ, էս քանի տարի ա,
որ ոտով-գլխով կորել ա. ընդուր ծերա էլ իրա ժողովրդին էլ, ինքն
էլ շիմ սև ա հագցրել, որ. ձիմ տղին չվեա գտնեմ ոչ, ես էդ բանը
վերջացնիլ շեմ:

— Դուն թաքավորի տղին տր տենուս, կճնանշե՞ս:

— Ի՞նչ պտիմ ճնանշիլ, բեխա էր, որ ընդով կորավ, հըմի
ահագին մարդ կըլի:

— Ես էն թքավորի տղեն եմ:

— Շիտակ էս ասո՞ւմ:

— Շիտակ եմ ասում, ես էն թաքավորի տղեն եմ. դու գնա
թաքավորի անկաճը բռնի, քեզ խելի բան կբախշի:

Հոտաղն ուզաց, թե դրա դաքին վազ տա, մաճկալը քարով
էրես, սըպանեց, ինքը վազեց, գնաց թքավորի կուշտը: Թաքավորի
տղեն մլորած մնաց էդ սպանված հոտաղի կշտին, խալխն էկան.
հասան: Որ ընկավ էդ դաճմաղալի մեշը՝ ախշիկը մտիցն ընկավ:
Թաքավորն ու մերն էլ էկան, տղին վի կալան, տարան իրանց օթա-
խը: Ախշիկը մնաց էն ջրի զրաղին նստած մենակ:

Ախշիկն ասավ.— Ա՛յ նամարդ, ես գիտեի, որ դու ինձ պը՛հիլ
չպըտիս, վերջը բրախիլ պըտիս:

Ախշիկն ասավ.— Լա՛վն վն ա ես մի վարդի ծառ դառնամ ըստի,
թե չէ ուրիշ մարդի ձեռ կընկնեմ:

Դա դառավ մի վարդի ծառ:

Մի պառավ կնիկ էկավ, ըտի տավար կար, էն տվարի թրիբը
հըվաքելու, շորացնելու: էգ պառավ կնիկը թրիքը հըվաքելով գնաց-
տեհավ մի վարդի ծառ աղաքին:

— Զա՛ն,— ասավ,— էս ինչ լավ բան ա, սրան քոքիցը կհանեմ, կըտանեմ՝ թքավորի տղեն որ էկել ա, թքավորին փեշքաշ կանեմ, ինձ բան կբախշի, կտանեմ կուտեմ, պառավ կնիկ եմ, կապրեմ:

Քոքիցը հանեց էդ վարդի ծառը, տարավ իրան տուն: Էդ պառավը օրը մի գրվանքա բամբակ ուրիշից բերեր, էրկու օրումը, իրեք օրումը մաներ, տաներ տեր տերը, նրա հախն առներ, բերեր՝ հացի տեր, բանի տեր, որ ապրեր:

Վարդի ծառը, որ էդեր տանը, դնաց մի գրվանքա բամբակ էլ էրեր տուն, ինքն իրան ասավ.— Սոված մեռնում եմ, գնամ հրևանի տուն, գամ, որ էս բամբակը մանեմ, որ տանեմ տիրոնչը տամ, փողն առնեմ, որ հացի տամ, ուտեմ:— Ասավ ու էթող, գնաց հրևանի տուն:

Էդ ախիկը էդ բանը էդ պռավիցն իմացավ, պառավը դուռը լինու հետ՝ մի սհաթ էդ բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախարավ: Վի կացավ օթախը ավլեց, խորակ շինեց, իրան փայլ կերավ, պռավի փայլը կրակի դաքին ծածկեց, ինքը էլեդ դառավ վարդի ծառ:

Պառավը մխելի վախտիցը եղը էկավ, տեհավ, որ տունն ավլած, թելը մանած, խորակը շինած, կրակի դրաղին ծածկած:

Պառավը շատ արմացավ. ձէս ի՞նչ թավուր բան ա, դուռը փակած, բլանին իմ ջեբումը, նի են մտել ու էդ բանն արելա:

Թելը վի կալավ ու տարավ էրես տիրոջը:

— Դեդի՛,— ասավ,— էս ի՞նչ կոկլիկ մանած ես արել, կասես թե օձի բերնից դուռ քաշած ըլի: Համ ամեն հետ շատ եղի մանեիր, բերեիր, էս ի՞նչ շուստ մանեցիր:

— Ա՛յ որդի, ամեն հետ սոված էի, էսօրի կուշտ եմ էլել, ընդուր հրաքաթ արի շուստ մանեցի:

— Դեդի ջա՛ն, որ ըտենց ա, էրկու գրվանքա էլ տար, էլի ըսենց մանած արա, ես քեղ սոված պըհիլ չեմ:

Քաշեց ու էրկու գրվանքա բամբակ էրես պռավին: Տարավ էդիր տանը պառավը, ինքը վիկացավ, գնաց ջուրը, ջրումը շատ խալխ կար, պառավը խելի եղացավ: Հլե չվելը պռավի գալը ախիկը դուռ էկավ, տունն ավլեց, բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախարավ: Մի խորակ շինեց ինքը կերավ, պռավի փայլն ընդի ծածկեց կրակի դրաղին: Պառավը ջրիցը էկավ, տեհավ տունն ավլած, բամբակը մանած, խորակը էփած: Պառավը շատ դարմա-

ցավ, կանգնեց գետ մտիկ արավ, դեն մտիկ արավ, ասավ. «Էս վարդի ժառը խո էս անիլ չի»:

Մի օր պհեց էդ թելը, էքսը վիկալավ տարավ էրետ տերր:

Թելատերն ասավ.— Ապրե՛ս, դեղի՛, էս ընդրանից լավ ես մանել, շնորհակալ եմ:

Պառավն ասավ.— Իրեք գրվանքա բամբակ քաշի տուր:

Իրեք գրվանքա բամբակ քաշեց, էրետ իրան:

Պառավը տարավ տանը էդիր էտ բամբակը, դաստի իրան-իրան ասավ. «Գնամ հըրեանի տունը, գամ»: Պառավը դուս էլավ, վարդի ժառը էլեդ դառավ ախչիկ, բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախ արավ: Տունն ավլեց, խորակը շինեց, իրան փայը կերավ, պռավի փայը ծածկեց: Գնաց էլեդ դառավ էն վարդի թուփը:

Պառավը տուն էկավ, տեհավ, որ շինած չիմ. վի կացավ պառավը, ասավ. «Հըլա ես գնամ հըրեանի տուն, տենամ էս ի՞նչ քան ա»: Գնաց ու դռանը տապ արավ: Տեհավ էլի վարդի թուփը ախչիկ դառավ, տունն ավլեց ու խորակը շինեց, իրան փայը կերավ, պռավինը ծածկեց, ուզեց, որ գնա վարդի թուփը դառնա, պառավը շուտ տուն ընկավ ու փեշիցը բռնեց:

— Ախչի՛, — ասավ.— դու որ ախչիկ ես, խի՞ ես ըտթավոր բաներն անում, որ իմ խելքը կորչում ա գլխիցս:

— Ի՞նչ անեմ, դեղի ջա՛ն, վախում եմ, թե ինձ պահես ոչ ու պահպանես:

— Ես որդի չունեմ, քեզ իմ գլխի ծերին կպահեմ:

— Դե որ կպահես, դեղի ջա՛ն, օրը իրեք գրվանքա բամբակ կբերես, շատ սիրուն կմանեմ, քեզ կտամ, կտանես տերը կտաս, փողը կառնես, մեր գլուխը կպահենք էտով:

Մի օր պառավը դուս էլավ քուչեն, տեհավ, որ թքավորը պառավ կնանիք ա հվաքում: Տղեն նշնել ա, էդ պառավ կնանոց հվաքում ա, տանում ա, որ հրսանիքի շորը օխնեն, որ ձևեն:

Պառավը եդ էկավ իրանց տուն: Ախչիկը հարցրուց թե.— Դեղի՛, էդ ի՞նչ շատ եդացար:

Պառավն ասավ.— Թաքավորն իբա տղին նշնել ա, պառավ կնանիք էր հվաքե, տաներ, որ շորը օխնեն ու ձևեն, ես էլ ոաստ էկա, ինձ էլ տարավ:

— Դեղի ջա՛ն, — ասավ,— հըմի հրսանիքի շորերը կարո՞ւմ են:

Թե.— Հա՛, — ասավ,— որդի՛, կարում են:

Ասավ.— Դեղի ջա՛ն, գնա թքավորին ասա, տղիդ նհալին տուր, տանեմ իմ ախչիկը կարի:

Պառավելը դնաց թաքավորին ասավ.— Թաքավորն ապրած կենա, տղիդ նհալին տուր, տանեմ իմ ախշիկը կարի:

— Ախր դու ախշիկ շունես, ա՛յ պառավ, է՛,— ասավ թաքավորը:

Ասավ.— Ես մի ֆոքեորդի ախշիկ եմ ճարել ինձ հմար:

Թաքավորն ասավ.— Դեղի, ըժու քու ախշիկը էդքան շնորհք ունի՞:

— Թե լավ չի կարիլ,— ասավ պառավը,— իմ գլուխը քե հալալ:

Կլուկեց, էրետ պռավին: Վի կալավ էրեր տուն: Ախշիկը վի կալավ նհալին կարեց, մի քիչ տեղ անկարել էթող, կռացավ միջին ձեն ածավ.— Ո՛վ Սառսանամ, Սառսանամ,— ըսենց էր նրա անունը,— Սառան նանիցն ընկած, օխտն ախպորից ընկած, դոնե-դուռ ընկած Սառսանամ:

Հսենց ձեն քցեց նհալի մեջը ու կարեց: էրետ պռավին, պառավը տարավ էրետ թաքավորին:

— Ո՛ւհ, դեղի՛, ըսենց հոնարով ախշիկ ունես դո՛ւն:

Պառավն ասավ.— Որ ես ըտենց հոնարով ախշիկ շունենամ, իմ գլուխը կտրիլ կտամ քե՛ղ:

Թաքավորը տղի հըրսանիքը նստացուց: Օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արավ տղին: Թաքավէրեք արավ, շոկ օթախի մեջ գձեց տղին ու հարսին: Տղեն գնաց խտոր ընկավ, ախշիկն էկավ նհալին վեր էլավ, որ շորերը հանի, նհալու միջիցը ձեն էրետ, թե. «Սառսանամ, Սառսանամ, Սառան նանիցն ընկած, օխտն ախպորիցն ընկած, դոնե-դուռ ընկած Սառսանամ»:

էս ձենի վրա թաղա հարսի սիրտը ճաքեց ու մեռավ: Տղի միտն ընկավ, որ Սառսանամին անտեր բրախել ա:

Գնաց թաքավորին կանչեց, ասավ.— Արի տես, ախշիկը հանկարծ մահացավ:

Թաքավորը էկավ տեհավ, որ ախշիկը՝ սիրտը ճաքել ա, մեռել:

Ասավ.— Դե՛, ա՛յ որդի, ես ի՛նչ անեմ, դու ի՛նչ անես. դրա ճկատի գրածն էլ ըտենց էր:

Մի քանի օրից եդը Սառսանամը ասավ պառավին.— Կարա՞ս որ մի գիր գրեմ, տանես թաքավորի տղի ձիու յալիցը կախ անես:

— Լա՛վ,— ասավ,— որդի՛, խի՞ շեմ կանա տանի:

Մի գիր գրեց, էրետ պռավին, տարավ, մի ուստութենով թաքավորի տղի ձիու յալիցը կախեց ու դուռ էկավ:

Թաքավորի տղեն էկավ, որ ձին թիմարի, մտիկ արավ, տե-

հավ, որ յալիցը մի գիր գրած ա թե. «Թաքավորի աղա՛, ես քեզ
ասի, թե որ ինձ իմ տեղիցը ժած մի տուր, դուն հում կաթնակեր
ես, ինձ պըհիլ չես: Ծօ Ֆլան պըռավի տանն եմ, յա՛ արի ինձ տար
քիմ տեղը, յա՛ թե չէ, արի ինձ ուզի. թե ուզես էլ, էս պառավի տանը
պտի նշնվես ու ըստիան պտիս հրսանիք անի, տանի»:

Տղեն կարդաց, սիրտը տակն ու վրա էլավ, ասավ.— Թեկույ
թաքավորը վիզս կտրի, ես պտի երեսս պատռեմ, թաքավորին
ասեմ, որ ինձ հմա կնիկ ուզի:

Մի քանի օրից եղը թաքավորին հացի վրա ասավ.— Թաքա-
վորն ապրած կենա, թե կուզես գլուխս էլ կտրես, քեզ մի բան
պտեմ ասի:

— Ա՛յ որդի՛, ասա՛, — ասավ, — խի՞ կկտրեմ:

— Թաքավորն ապրած կենա, — ասավ, — մի քիչ իմ ասելու
խոսք չի:

— Ի՞նչ որ ըլի, որդի՛, կատարիլ պտիմ, ասա՛, — ասավ:

— Թաքավորն ապրած կենա, էդ մի ախչիկն հըա մահացավ,
իրո՛ւն ճակատի գիրն էր, բա ինձ հմար էլ կնիկ չպտես ուզի՞լ:

Թաքավորն ասավ.— Բա չպըտի ուզե՞մ, ուզել պտեմ:

Տղեն ասավ.— Թաքավորն ապրած կենա, թե ուզիլ պտիս,
մի ախչկա տեղ շանց կտամ քեզ, թե կուզես՝ էն ա, թե ուզիլ չես՝
էլ աշխարքի էրեսին ես կնիկ չեմ ուզի:

— Ասա՛, որդի, էդ որդի՞ ա, ասա՛ կուզեմ:

Ասավ.— Թաքավորն ապրած կենա, էն Ֆլան պըռավի տանը
մի ախչիկ կա, պտիս ընդի նշնի ու ընդիան էլ հրսանիք անի, բերի:

— Ա՛յ որդի, — ասավ, — նա ի՞նչ թավուր ախչիկ ա, որ ես
գնամ, էն պռավի տանիցը նըշնեմ, հրսանիք անեմ, բերեմ:

Ասավ.— Թաքավորն ապրած կենա, թե շատ-քիչ իմ գլուխը
կսիրես, կուզես առանձին, կուզես քու նազընով գնա, մի մհանով
պռավի դռնիցը անցի, տե՛ս, թե կհավանես՝ ընդի նշնի, ընդիան
հրսանիք արա, բի, թե հավանիլ չես՝ բրախի կորչի:

Թաքավորը վի կացավ, իրան նազընուցը մինը վի կալավ.
գնաց: Գնաց պռավի դուռը: Պռավի դռնիցը մտիկ արավ, տեհավ
ախչկանը՝ ուշքը գնաց, ախչիկը տեղիցը կաղնեց ու գլուխ էրետ:

— Դեդի՛, — ասավ թաքավորը, — ախչիկը քունն ա՞:

Քրքրվեց պառավը, թե.— Իմն ա:

— Դե, արի, — ասավ, — նշան տամ իմ տղի համար:

Պռավի ձեռն ու ոտը իրար խառնվեց: Դեմ վագեց, նշանն
ասավ, էրետ ախչկանն:

— Դե՛, — ասավ, — դեղի՛, այ էգուց հրսանիքը բերիլ պտիմ
քու դուռը: Ախկանդ հարցրու տես ղապո՞ւլ ա:

Ախկանը հարցրուց, ասեց. — Ախչի՛, զապո՞ւլ ես, որ գան
էգուց:

Ախչիկը գլխով էրետ:

Գնաց թաքավորը ուրախ-ուրախ տուն:

Ասավ. — Ապրի՛ աչբգ, տղա՛, էդ ախչիկը ե՞փի ես տեհել, որ
հըվանել ես:

— Թաքավո՛րն ապրած կենա, — ասավ, — ես աչբով շեմ տե-
հել, երազով եմ տեհել:

Թաքավորը սկսեց հրսանիքը նստացնիլը: Հրսանիքն էրեր պոա-
վի դուռը:

Օխտն օր, օխտը քշեր հրսանիք արավ: Հասցրուց իրուր մու-
րազի, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստծանե իրեք խնձոր վեր գա. մինն՝ ասողին, մինը՝ լսողին,
մինն էլ՝ ալամ աշխարբին:

